# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1552-Ա « 02 » մայիսի 2024թ.

## ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N45 -Ն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետին, 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան, հիմք ընդունելով ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժման դժվարություն ունեցող, հաշմանդամություն ունեցող կամ նրանց փոխադրող անձանց դիմումները.

1.Սույն որոշման հավելվածում նշված անձանց, որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև 2024 թվականի ավարտը տրամադրվում է ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն:

2.Տեղեկացնել սույն որոշման հավելվածում նշված անձանց, որ 2025 թվականի համար ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն ստանալու դիմումները կարող են ներկայացվել սկսած 2024թ. դեկտեմբերի 20-ից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության և քարտուղարության պետերի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովվում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի

02.05. 2024 թ.

հ. 1552-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ (ԿԱՄ ԱՅԴ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱԴՐՈՂ) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՂԵԿԱՎԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ

| N | Հաշմանդամի անունը և ազգանունը | Հաշմանդամի նույնականացման տվյալը | Փոխադրող մեքենայի համարանիշը | Փոխադրող անձը | Արտոնության տրամադրման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գոհար Ստեփանյան | Անձնագիր BA 3012050 | 10 GA 015 | Արփինե Զոհրաբյան | 31.12.2024թ. |
| 2 | Արմինե Հայրապետյան | Անձնագիր AS 0632443 | 19 LL 190 | Սմբատ Սիմոնյան | 31.12.2024թ. |
| 3 | Արեգ Հայրապետյան | Ծննդյան վկ. ԱԲ 233685 | 55 ZZ 955 | Վահագն Հայրապետյան | 31.12.2024թ. |
| 4 | Մարի Եսայան | Նույնականացման քարտ 013595962 | 34 VP 865 | փոխադրվում է ինքնուրույն | 31.12.2024թ. |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**